ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան, Խորենացու 7

<21> հուլիսի 2016թ.

ՈՐՈՇՈՒՄ No. 1388 /02

Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա.Մնացականյանս քննարկելով Ա/Ձ Ալֆրեդ Ղազար-Հովսեփյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային մարմնում առկա անձնական հաշվի քարտի տվյալների 20.05.2016թ. դրությամբ Ա/Ձ Ալֆրեդ Ղազար-Հովսեփյանի /ՀՎՀՀ՝ 43073716, հասցեն՝ ք.Աբովյան, 3մ/շ 48շ. 4բ./ չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 178.669 դրամ, որն ամբողջությամբ եկամտային հարկի գծով է, որն առաջացել է 2013-2014 թթ-ի եկամտային հարկի հաշվարկներից, որը ենթակա է գանձման:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի իրավաբանական վարչությունում, համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, հարուցվել է վարչական վարույթ Ա/Ձ Ալֆրեդ Ղազար-Հովսեփյանի չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ՝ <<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 29.1 հոդվածով նախատեսված վարչական ակտ ընդունելու նպատակով, որի մասին 07.07.2016թ. անհատ ձեռնարկատերը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն վարույթի նյութերին ծանոթանալու համար չի ներկայացել և որևէ բացատրություն չի տվել:

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր և տուգանքներ:

<<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է, որ հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարտադիր և անհատույց վճար է: Համաձայն <<Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքի՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների հիմնական աղբյուրը հարկային եկամուտներն ու պետական տուրքերն են, որոնց հավաքագրման շնորհիվ են կատարվում նույն օրենքով նախատեսված հանրային, պաշտպանության, հասարակական, անվտանգության, դատական գործունեության և այլ ոլորտներում նախատեսված ծախսերը: Նշվածից ելնելով և հաշվի առնելով հարկային պարտավորությունների գանձման կարևորագույն հանրային նշանակությունը՝ սույն որոշումը ենթակա է անհապաղ կատարման:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով <<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 29.1 հոդվածով, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ա/Ձ Ալֆրեդ Ղազար-Հովսեփյանից գանձել 178.669 դրամ պարտավորության գումար:

Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել ման ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման յություն:

3. Որոշման օրինակը եռօրյա ժամկետում ուղարկել /ֆիզ. անձին կամ/ հարկ վճարողին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին կամ վերադաս վարչական մարմին՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70, 71 հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ**

Ստացա որոշման օրինակը

Ստորագրություն

հարկ վճարողի /կամ ֆիզ. անձի/ պաշտ. անձի անուն ազգանուն

ամսաթիվ

Կատր. առաջատար մասնագետ
Ժենյա Նազարյան հեռ. 060- 54-42-78